

## ՇԱՅ ՍՎԴՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

### ՀԻՄՆԱԿԱՆՆԵՐԸ

(Զեկույց Սպեֆանակերպում իրավիրված միջազգային

խորհրդաժողովում, 17.04.2010թ.)

Խորհրդաժողովի հարգարժան մասնակիցներ,

Սահմանադրականության հիմնախնդիրը՝ իշխանության սահմանափակման եւ իրավունքի գերակայության երաշխավորման դեսանկյունից, վերջին հարյուրամյակների ընթացքում մշտապես գրնչել է գիրական հետաքրքրությունների եւ պետականաշխնության կիզակեցում: Ազագական իրավամբածողության սահմանավորումը Եվրոպայում առաջին պատճեց մարդկային իրավունքների ու ազագությունների երաշխավորման անհրաժեշտությունը, որը հեղափոխական մրածողության ալիքի վրա իր առաջին համակարգված գործնական արդահայքությունը գրավ 1689թ. Անգլիայում ընդունված Իրավունքների բիլում: Այն հետագայում իր արդացոլումը գրավ Էն<sup>3</sup> ։ Անգլիայում մասին 1789թ. ամերիկյան հռչակագրում, ինչպես նաև Մարդու եւ քաղաքացու իրավունքների մասին 1789թ. ֆրանսիական հռչակագրում: Վերջինս բովանդակում է սահմանադրականության հոյակապ բանաձեռում, շեշտելով, որ «Այն հասարակությունը, որում ապահոված էն իրավունքի երաշխիքները եւ չկա իշխանությունների գործառնությունը»:

Սահմանադրություն»: Զեւավորվում էր պետական-հանրային կյանքի կազմավորման նոր դրամաբանություն, որի առանցքն իրավունքի կարեւորումն ու իշխանության սահմանափակումն էր: ԱՄՆ Սահմանադրության հայրերն այս խնդրի լուծումը փնտրեցին առաջին հերթին իշխանությունների բաժանման ու հակակշռման ճանապարհով: Ինչպես պնդում էր Զեյմս Մեդիսոնը՝ փառամոլությանը պետք է հակադրել փառամոլություն՝ այն զսպելու համար: Նա գրնում էր, որ հակադիր եւ մրցակցային շահերի սահմանադրորեն հավասարակշռումը կարող է զսպել իշխանությանը եւ երաշխավորել ազագությունը<sup>1</sup>: Իսկ Հակոբ եւ Շահամիր Շահամիրյանները դեռեւ 1773 թվականին ապագա անկախ Հայաստանի համար գրվող սահմանադրությունը պարզապես անվանեցին «Որոգայթ փառաց»՝ անվան մեջ ամփոփելով սահմանադրական կարգավորումների ողջ իմաստն ու դրամաբանությունը:

Սնվելով սահմանադրական իրավամբածողության այդ ակունքներից՝ ազագական-իրավական զարգացումներն ասդիմանաբար կյանքի կոչեցին դեռեւս վաղ միջնա-

<sup>1</sup> Stéphane Paccot. Г. Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

դարում ճանաչում գրած այն հանճարեղ ընդհանրացումը, որ եթե մարդկային կյանքի օրենքները չեն բխում բնական իրավունքից, բնության օրենքներից, ապա դրանք օրենքներ չեն, այլ դրանց այլասերումը:

Հարկապես XX դարի սահմանադրական զարգացումները համակարգային ամբողջականություն հաղորդեցին ազարական-իրավական արժեքանության հենքի վրա կառուցված սահմանադրական զարգացումներին: Դրանք իրենց դասական կափարելությանը հասան Գերմանիայի Դաշնության Դիմնական օրենքում՝ առաջին խև հոդվածում ամրագրելով, որ մարդու իրավունքները ոչ միայն բարձրագույն արժեք են ու անօտարելի իրավունքներ, այլև գործում են անմիջականորեն:

Նախորդ հազարամյակն իր հետք բերեց ինչպես շրջադարձային բազում լուծումներ, այնպես էլ համակարգային աննախադեպ հակամարդություններ ու փլուզումներ, որոնք դասնյակ երկրների համար սահմանադրական նոր լուծումների անհրաժեշտություն թելադրեցին: Դրա վերջին երկու մեծ ավիքները ծավալվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից եւ ապա՝ ԽՍԴՄ փլուզումից հետո: Երկու դեպքում էլ զարգացումները գնացին պարմականորեն քննություն բռնած եւ այլընդունակ չունեցող արժեհամակարգային միեւնույն ուղիով՝ սահմանադրական ժողովրդավարություն հասպարելու անհրաժեշտության գիրակցման եւ երաշխավորման ճանապարհով:

Դա առավել դյուրին փրվեց սահմանադրական գործադրության լուծումների մակարդակում: Սակայն շարունակում է հսկայական մնալ այդ լուծումների ու իրական կյանքի միջեւ անջրագերը: **Սահմանադրության առկայությունն ինքնին որեւէ խնդիր չի լուծում:** Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն է, Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը, որի պարագայում միայն հնարավոր կլինի երաշխավորել իրավունքի գերակայությունը:

**Գերխնդիրը եղել ու շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը:**

Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, իրավական, ժողովրդավարական պետության կարգախոսից՝ քաղաքացիական հասարակության կայացում եւ իրավունքի գերակայության երաշխավորում՝ սրանք ոչ միայն նպագակ, այլև կոնկրետ խնդիրներ են, որոնք նույնքան կոնկրետ լուծումներ են պահանջում: Դրանք առավել դժվար լուծելի են այն երկրների համար, որոնք ընդունակ են այսպիս կոչված, մոդելային սահմանադրությունների ընդունման ճանապարհը:

Ենթաւ 2004թ. Սանդուղյուն իրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության գագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, իին դոկտրինաներ» թեման: Արված կարեւոր

հետեւություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու իդեալական Սահմանադրություն լինել: Այն յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաև միջազգային սահմանադրագիրության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մոփեցումներ: Այն համակարգերում, որտեղ սահմանադրական ժողովրդավարությունը դեռևս գրնչում է սաղմնային վիճակում, սահմանադրական զարգացումների գլխավոր խնդիրը հիմնական սկզբունքների ու արժեքների ձեւախնդումներից խուսափելն է, այն բանի գիրակցումը, որ սահմանադրական պետությունը ձեւավորվում է հասարակության համարժեք սահմանադրական մշակույթով:

Քաղաքակրթության ներկա ձեռքբերումների հոլովույթում սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրին այն է, որ երկրի Տիմնական օրենքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուասի պաշտպանությունն ու վերարդադրումը: Այդ արժեքները, իրենց հերթին, ձեւավորվում են դարերի ընթացքում. յուրաքանչյուր սերունդ վերահիմասպավորում է դրանք ու իր հավելումով երաշխավորում զարգացման շարունակականությունը: Նաշողությունն ուղեկցում է այն ազգերին ու ժողովուրդներին, որոնց մոտ այս շղթան չի ընդհապվում կամ լրջորեն խոփորվում:

Յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է, արժեվորված ներկայությունը ժամանակի մեջ: Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի սահմանադրականության արժեքային կողմնորոշիչները պայմանավորված են նրա սոցիալ-մշակութային դիմագծով եւ թելադրում են կոնկրետ սահմանադրական լուծումների առանձնահավաքությունները:

Իր հերթին՝ «Սահմանադրականությունը»՝ սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում:

«Սահմանադրականություն» հասկացությունն արդի միջազգային իրավամբածողության մեջ կապվում է մի շարք իրավական երեսույթների հետ, ինչպիսիք են.

- սկզբունքների, գործունեության կարգի եւ կառուցակարգային մոփեցումների ընդհանրությունը, որոնք ավանդաբար օգտագործվում են պետական իշխանության սահմանափակման նպարակով<sup>2</sup>,

- սահմանադրական միջոցները՝ պետական իշխանության համար սահմանափակումներ նախադասելու նպարակով<sup>3</sup>,

- համապետական, վերկուսակցական, միաբանող գաղափարախոսությունը<sup>4</sup>,

<sup>2</sup> Шайо А. Самоограничение власти (краткий курс конституционализма). - М., 1999.

<sup>3</sup> Barendt E. Introduction to Constitutional Law. - Oxford Univ. Press, 1998.- P. 14.

<sup>4</sup> Нерсесянц В. С. Конституционализм как общегосударственная идеология // Конституционно-правовая реформа в Российской Федерации. Сб. ст. / Отв. ред. Ю. С. Пивоваров. М., 2000. С. 6-8.

- իրավաքաղաքական ռեժիմը, որի դերը հասարակության ներսում արդարության ու ներդաշնակության երաշխավորումն է<sup>5</sup>,
- կառավարման սահմանադրական կարգի առկայությունը, պետական կառավարումը՝ սահմանափակված Սահմանադրությամբ<sup>6</sup>,
- պետքության ինքնասահմանափակումը<sup>7</sup>,
- իրավունքի եւ քաղաքականության փոխներթափանցման ասրիճանը<sup>8</sup>,
- իրավունքի փիրապետությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորդներում, որը ենթադրում է մարդու իրավունքների առաջնահերթություն եւ երաշխավորում է անհարի ու պետքության փոխադրձ պարասխանագրությունը<sup>9</sup>,
- Սահմանադրությանը համապատասխան պետական եւ հանրային կյանքի կազմակերպման գեսառությունն ու պրակտիկան կամ Սահմանադրության վրա հիմնված քաղաքական համակարգը<sup>10</sup>,
- իրավունքի գերիշխանության սկզբունքը, որը ենթադրում է երկրի իշխանությունների ու պետական մարմինների իշխանական լիազորությունների սահմանափակում<sup>11</sup>,
- պետքության իրական վիճակի եւ Շիմնական օրենքով նախագեսված՝ երկրի իրավական մոդելի ներդաշնակությունը<sup>12</sup>,
- Սահմանադրության (գրված կամ չգրված) առկայությունը եւ դրա ակտիվ ներազդեցությունը երկրի քաղաքական կյանքի վրա, ...պետական համակարգի, քաղաքական ռեժիմի, անհարի իրավունքների ու ազարությունների ճանաչման եւ քաղաքացի-պետքություն փոխհարաբերությունների սահմանադրական կանոնակարգվածությունը, դրա իրավական բնույթը<sup>13</sup>,
- սահմանադրական դրույթների երաշխավորվածությունը ժողովրդավարական պետքությունում<sup>14</sup>,

<sup>5</sup> Сонина Л. В. Конституционализм в Российской Федерации как политико-правовой режим: Автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2001. С. 7-8.

<sup>6</sup> Пуздрач Ю. В. История российского конституционализма IX-XX веков. СПб., 2004. С. 7.

<sup>7</sup> Шайо А. Транснациональные сети и конституционализм // Сравнительное конституционное обозрение. 2008. N 5 (66), С. 123.

<sup>8</sup> American Constitutionalism: From Theory to Politics, Stephen M. Griffin, One of *Choice's Outstanding Academic Books* of 1997.

<sup>9</sup> Ромашов Р.А. Современный конституционализм: теоретико-правовой анализ.  
<http://www.lawlibrary.ru/disser2000401.html> (09.03.2009).

<sup>10</sup> <http://dic.academic.ru/dic.nsf/enc-law/1027/>.

<sup>11</sup> Рассел Г. Конституционализм: опыт Америки и других стран  
<http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

<sup>12</sup> Укреплять и совершенствовать конституционный строй (интервью с Л.С. Мамутом) // Законодательство и экономика. – 2003. - №12.

<sup>13</sup> См.: О. Е. Кугафин, Российский конституционализм. М., 2008. С. 47.

<sup>14</sup> Progressive and Conservative Constitutionalism, Journal article by Robin West, M. Tushnet, R. Epstein, Raoul Berger, Robert Bork; Michigan Law Review, Vol. 88, 1990. 81 pgs.,

- այն իրողության առկայությունը, երբ ոչ միայն պետական պաշտոնյաները, այլև յուրաքանչյուր քաղաքացի անհրաժեշտությամբ առաջնորդվում է ոչ թե նպագակահարմարությամբ, այլ օրենքով<sup>15</sup> եւ այլն:

**ԱՄՆ Գերազույն դատարանի իրավական դիրքորոշումներում սահմանադրականությունը բնորոշվում է որպես քաղաքական մոքի ու գործողության դրսեւորման ձեւ, որը կոչված է կանխելու բռնակալությունը եւ երաշխավորելու ազարությունն ու անհապի իրավունքները, որից կախված է ազար հասարակությունը<sup>16</sup>: Այն առավել սեղմ բնորոշվում է որպես Սահմանադրությանը համապատասխան քաղաքականության վարքագիծ<sup>17</sup>:**

Բանաձեւումներն այսքանով չեն սպառվում, սակայն բերված օրինակները բավարար են երեւոյթի փարբեր ընկալումները հիմնական գծերով ներկայացնելու համար:

Իրավագետներից շատերն են կարծում, որ «սահմանադրականություն» հասկացությունը բազմաշերտ ու բազմամիաս է, եւ այն որեւէ կրնկրելով հավկանիշով բնութագրելու անհնարին է: Դա իրոք այդպես է: Միաժամանակ, մասնագետներին պայմանականորեն կարելի է դասել երկու խոշոր խմբերի.

1. ովքեր սահմանադրականություն երեւոյթը կապում են բուն Սահմանադրության գոյության փաստի եւ դրա միջոցով իրականացվող իրավակարգավորման հետ,
2. ովքեր սահմանադրականությունը դիմում են արժեքանական փեսանկունից՝ որպես հասարակական համակեցության որոշակի մշակույթի դրսեւորում:

Մենք գրնում ենք, որ առաջին մոփեցումը բխում է երկրորդից եւ ածանցյալ նշանակություն ունի: Միանգամայն համամիտ ենք ակադեմիկոս Վ. Ներսեսյանցի այն մոքի հետ, որ սահմանադրականությունը համապետական գաղափարախոսություն է: Դավելենք, որ այն պետական համակեցության մշակույթ է, որ ձեւավորվում է հազարամյակների ու դարերի ընթացքում, ունի խոր սոցիալական արմագներ եւ առաջին հերթին պետք է դիմում որպես սահմանադրական մշակույթի դրսեւորման ձեւ, որը կարող է փարբեր լինել ոչ միայն փարբեր երկրներում, այլև զարգացման փարբեր փուլերում:

Ընդհանրացնելով՝ կարող ենք բանաձեւել, որ «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունն է, դրանց՝ որպես ապրող իրողության, գոյությունը հանրային կյանքում, յուրաքանչյուր անհապի քաղաքացիական

<sup>15</sup> Herman Belz, "A Living Constitution or Fundamental Law? American Constitutionalism in Historical Perspective" (Rowman & Littlefield Publishers, Inc. 1998) at p. 148-149.

<sup>16</sup> <http://www.answers.com> -14.03.2010.

<sup>17</sup> <http://www.answers.com/topic/formalistic> -14.03.2010.

**Վարքագծում, պետականական լիազորությունների իրականացման գործընթացում:**

Կամ, ավելի սեղմ՝ «Սահմանադրականությունը»՝ սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում, անհափի սոցիալական վարքագծի բոլոր դրսեւումներում: Խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձեւավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման:

Պետականության կայացումը դեռևկան ու դժվարին գործընթաց է: Տամակարգային ամեն մի սխալ վերարդարվող շղթա կարող է դառնալ ու ավերիչ հետևանքներ ունենալ: Մեր ժողովրդի պարմական ճակարտագիրը խոսուն վկան է այն բանի, որ մեր իրականության դասերը միշտ չեն, որ կարողացել ենք ժամանակին սերվել ու դրանցից հետևություն անելով՝ «...քաղաքական կարգերի գիրություն սովորել»: Մովսես Խորենացին «Հայոց պարմությունն» սկսում է «...մեր առաջին թագավորների եւ իշխանների անիմասրասեր բարերի մասին» կշրամքանքի խոսքերով եւ արժանին է հապուցում նրանց, որոնց «...շարադրած գրվածքները կարդալիս աշխարհական կարգերի գիրություն ենք ձեռք բերում եւ քաղաքական կարգեր ենք սովորուած»<sup>18</sup> (ընդգծումը մերն է - Գ.Ն.): Միաժամանակ խոսելով 365թ. իրավիրված Աշփիշարի ազգային-եկեղեցական ժողովի ու դրանում ընդունված Կանոնական սահմանադրության մասին<sup>19</sup>, շեշտում է, որ Մեծն Ներսեսը «...եպիսկոպոսների եւ աշխարհականների ժողով գումարեց, Կանոնական սահմանադրությամբ հաստիքեց ողորմածությունը, արմատախիլ արեց անգթությունը...»<sup>20</sup>:

Ներսես Մելիք-Թանգյանը, իր հերթին, 444թ. գումարված Շահապիվանի ժողովի առնչությամբ նշում է, որ «Շահապիվանի ժողովը հայոց ամենափառավոր ժողովներից մեկն է»<sup>21</sup>: Նկարագրելով ժողովի իրավիրման կարգը՝ այսպես է ներկայացնում դրա բուն նպարակը. «Հայոց աշխարհի ավագ Նախարարները, ովքեր օրենքների եւ սրբությունների նախանձախնդիր պաշտպաններն էին, այսպես էին ասում. «Վերականգնեք սուրբ

<sup>18</sup> Մովսես Խորենացի, Հայոց պարմություն, Երեւան, 1997, էջ 70:

<sup>19</sup> Այս ժողովն արգելեց ամուսնությունը մերձավոր ազգականների միջեւ, դադապարփեց նենգությունը, քսությունը, ազահությունը, որկրանողությունը, հափշրակությունը, արվամողությունը, բամբասանքը, մոյի հարթեցողությունը, սփախտությունը, պողմկությունը, արյունահետ սպամությունը, ինչպես նաև պարփակութեցրեց նախարարներին գթասրբությամբ վարվել աշխարհավորների հետ, իսկ ծառաներին՝ հնագան լինեց պերերին: Որոշվեց վկարների համար կառուցել հիվանդանոցներ, որքերի ու այրիների համար՝ որբանոցներ ու այրիանոցներ, օփարների ու հյուրերի համար՝ հյուրանոցներ, դրանք պահելու համար սահմանվեցին լրութեր ու հարկեր: Որոշվեց երկրում լուսավորություն գրաբանելու նախարարական բացել հունարեն եւ ասորերեն լեզուներով դպրոցներ (նպարակը երկրի ներսում կրթություն գրաբանել է այդ նպարակով երիկասարդների արտահոսքը կասեցնեն եր): Այս բոլորն իրենց հերթին սպելում էին նոր միջավայր ու խթան՝ երկրի գարգացման համար:

<sup>20</sup> Մովսես Խորենացի, Հայոց պարմություն, Ե դար, Երեւան, 1997, էջեր 224-225:

<sup>21</sup> Ներսես Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շոշի, 1903, էջ 319:

Գրիգորի, Ներսեսի, Սահակի եւ Մաշտոցի սահմանած կարգ ու կանոնը, ինչպես նաև ձեր կամքով սահմանեք այլ բարօրություններ, եւ մենք կամավոր ու սիրով կընդունենք, քանի որ թուլացել են եկեղեցու կարգ ու կանոնները, եւ մարդիկ վերադարձել են անօրինություններին: Դուք սահմանեք Ասքծուն ցանկալի եւ եկեղեցուն կյանքի կոչելու գործում պիտանի օրենքներ, իսկ մենք կինազանդենք եւ դրանք ամուր կպահենք: Իսկ եթե ինչ-որ մեկը՝ եպիսկոպոս, թե քահանա, ազար, թե շինական, ճշգրությամբ չպահպանի սահմանված օրենքները, թող պարփծ կրի եւ տուգանք մուծի»<sup>22</sup>: Ի դեպ, ըստ Ներսես Մելիք-Թանգյանի՝ այս ժողովին մասնակցել են նաև բոլոր նախարարները, Վասակ մարզպանը, Վահան հազարապետը, Վարդան Մամիկոնյանը: Շեշրվում է նաև, որ «Ամբողջ գիեղերական քրիստոնեայ ժողովների մեջ այսպիսի փառաւոր ժողով չի եղել, ուր մասնակցեին հոգեւորականները իրենց դասերով եւ իշխանները աշխարհական զանազան դասակարգերով»<sup>23</sup>:

Այսպես մեզ համար շեշտադրման առարկան ոչ այնքան պարմական բացառիկ կարեւորություն ունեցող իրողությունն է, որքան սահմանադրական կանոնների եւ իրական կյանքի պահանջների օրգանական միասնականության դրսեւորումը: Այս օրինակներն անհերքելի վկայությունն են այն բանի, որ հայ իրականության մեջ իրավակարգավորումը երբեք ինքնանպարակ չի եղել, այն կրրված չի եղել մեր սոցիալական կյանքից ու այն վերափոխելու իրամայականներից: Դրա լավագույն վկայություններն են նաև Հովհաննես Օձնեցու Հայոց կանոնագիրը, Մխիթար Գոշի Դադասպանագրի եւ Շահամիրյանների Որոգայթ փառացի նախարանները, որոնք, ի մասնավորի, իրավական ամբողջական գրեսություններ են ներկայանում:

Անհնարին է չիշխարակել նաև Վաչագան Բարեսպաշտի նախաձեռնությունը 488 թվականին: **Սահմանել կանոններ եւ սահման դնել գործողություններին**, այն իրականացնել ներկայացուցական ժողովի միջոցով<sup>24</sup> եւ **ձեռք բերված փոխամածայնությունը վավերացնել Աղվանքի բոլոր ազնվականների կողմից ու «...գրության ավելի վավերական լինելու համար» կնքել Արքայի մատանիով՝ սրանք լրկ վկայություններ չեն հայ եւ համաշխարհային իրավունքի պարմության մեջ Սահմանադրություն երեսութի ու սահմանադրական մշակույթի հիմնաբարբերի ծնունդի մասին: Մենք գործ ունենք առանձնահարուկ ուշադրության արժանի իրավափիլիսոփայական այնպիսի իրողության հետք, երբ չափազանց հետաքրքիր ընդհանրություններ ենք գեսնում, օրինակ, 488 թ. Աղվանքում Սահմանադրության ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ու կարգի եւ 1787թ. ԱՄՆ-ի, 1791թ. Լեհասպանի ու Ֆրանսիայի, հետագայում նաև այլ**

<sup>22</sup> Նոյն գեղում:

<sup>23</sup> Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 320:

<sup>24</sup> Ինչպես վկայում է Խ. Սամուելյանը, ընդհանրապես հայ միջնադրայան իրականության մեջ «...Ազգային եկեղեցական ժողովներն իրենց վերապահում էին օրենսդիր կամ իրավադիր քունկցիաներ» (նշվ. աշխ., էջ 45):

Երկրների սահմանադրությունների ընդունման միջև: Նույնն է ընդհանուր փիլիսոփայությունը՝ սահմանել հասարակական գոյի հիմնարար կանոնները, որոնք գերակա են այլ օրենքների ու կանոնների նկազմամբ, ինչպես նաև սահման դնել իշխանավորների գործողություններին՝ դրանք պահելով սահմանադրական կանոնների շրջագծում, դա իրականացնել իրապարակայնորեն ու հասարակական լայն համաձայնության պայմաններում՝ ի դեմս պետքության գլխի կողմից իրավիրված Սահմանադիր ժողովի գումարման:

Պետքության Դիմնական օրենքի ի հայր գալը՝ Սահմանադրության անհրաժեշտությունը, XVIII դարի վերջին կապվեց հասարակական համաձայնության հենքի վրա երկրի կայուն եւ դիմամիկ զարգացումը երաշխավորելու անհրաժեշտության հետ: Ըստ էության, նույն նպագակն է հետքապնդվել նաև հայ իրականության մեջ վաղ միջնադարում: **Պարմությունը վկան է նաև այն իրողության, որ նման իրավական հենքի վրա, հասարակական համաձայնությամբ առաջնորդվելով, ձեռք են բերվել մեծ հաջողություններ, եւ երկիրը զարթոնք է ապրել, իսկ բռնության, «անհասկացողությունների», բարարնույթ «հակառակությունների» դիրքապեսման պայմաններում ուղեկից են եղել անխոսափելի կորուսպներն ու ավերածությունները:**

Չափազանց արժեքավոր են, օրինակ, Մարքենոս Ուտհայեցու վկայությունները, երբ խոսելով Աղվենի Կանոնական սահմանադրության ընդունման ժամանակաշրջանին առնչվող իրադարձությունների մասին, նշում է. «...Վյն ժամանակներում էր, որ չորս մասի բաժանվեց սուրբ Գրիգորի Աթոռը: ...Վյն ժամանակներում էր, որ բանական ոչխարները շնաբարո դարձան, գազանները սիրու ձեռք բերեցին եւ հանդգնեցին եւ սկսեցին հայրապետների երեսին հաջել: ...Սակայն նման փակնուվրայությունը եւ սրբմբությունը չկարողացավ մուտք գործել Աղվենից երկիրը, որ կոչվում է Խորին աշխարհ Շայոց...»<sup>25</sup>:

Կրկին ու նոր փեսանկյունով անդրադարձ կափարելով սահմանադիր ժողովներին ու կանոնական սահմանադրություններին, կարող ենք ընդհանրացնել, որ հայ միջնադարյան իրականության մեջ գործ ունենք սահմանադրական մշակույթի, **սահմանադրականության կարեւոր գործերի կոնկրետ դրսեւումների իրողության հետ՝** անկախ պետքականության առկայությունից կամ կորսափից:

Պարմական իրողությունները միանշանակ վկայում են, որ երբ հայ իրականության մեջ շեշտը դրվել է փոխհամաձայնությամբ ձեռք բերված կանոնների միջոցով ողջ հանրային կյանքը կարգավորելու վրա, ակնառու առաջընթաց է գրանցվել բոլոր ոլորդներում: Թեկուզ սաղմնային վիճակում, սակայն սահմանադրական մշակույթը մեր լինելության ու զարգացման համար առանցքային նշանակություն է ունեցել դեռևս մարդկային հանրության պարմության արշալույսին: Տակառակը, անհամաձայնությունները կամ դրանք բռնությամբ հաղթահարելու փորձերն են դարձել անհաջողությունների

<sup>25</sup> Մարքենոս Ուտհայեցի, Ժամանակագրություն, Երեւան, 1991, էջ 247:

պարբռառ: Դարերի կշիռ ունեն մեծ քերթողահոր խոսքերն Արշակունյաց թագավորության կործանման առիթով հնչեցրած ողբում, որ որպես հիմնական պարբռառներ շեշտադրվում են. «...վրդովվեց խաղաղությունը, արմադացավ անկարգությունը, խախովեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիրությամբ չարափառությունը»<sup>26</sup>:

Ինչ են հուշում պարբռության դասերը՝ հայ սահմանադրականության զարգացման ներկա հիմնախնդիրների հոլովույթում: Այս նյութի շրջանակներում ես կսահմանափակվեմ միայն դրանց ոչ սպառիչ թվարկումներով:

Նախ. առանց հանրային կյանքի խելամիտ իմաստավորման «...քաղաքական կարգերի գիրություն» չենք սովորի:

Երկրորդ՝ առանց հասարակական համաձայնության ու փոխսպահության երկրում սահմանադրականության հաստատումն անհնարին է:

Երրորդ՝ սահմանադրական արժեքներն ապրող իրողություն կարող են դառնալ միայն ու միայն այն ժամանակ, եթե դրանք գիրակցված անհրաժեշտություն են հասարակության յուրաքանչյուր անդամի համար:

Չորրորդ՝ սահմանադրական իրավական պերության գերազույն խնդիրն իրավունքի երաշխավորումը, ապահովումն ու պաշտպանությունն է եւ իշխանության սահմանափակումը:

Դինգերորդ՝ հանրային կյանքում սահմանադրական արժեքների ձեւախեղման ասդիմանով է գնահատվում հասարակական կենսագոյի հիվանդության ասդիմանը, որը մեզանում բազնապահարույց է:

Վեցերորդ՝ առանց երկրում սահմանադրական կայունության զարգացում երաշխավորելն անհնարին է:

Յոթերորդ՝ Սահմանադրությունը ոչ թե իրավական գործիք է պերական իշխանության ձեռքին, այլ քաղաքացիական հասարակության Դիմնական օրենքն է:

Ավարգեմ խոսք՝ դարձյալ հիշելով Խորենացուն. ավելորդ է այլևս մեզ, հայերիս «...խոսել անբան, թուլամիտ եւ վայրենի մարդկանց մասին»<sup>27</sup>: Մենք պարփակոր ենք անհրաժեշտ դասեր քաղել մեր իսկ պարմությունից: Իսկ այն ազգն ու ժողովուրդը, ով իր անցյալը պարշաճ չի իմաստավորում եւ անհրաժեշտ դասեր չի քաղում, դարփապարփած է վերապրել իր կորուսպները: Իսկ դրա իրավունքը մեր սերունդը պարզապես չունի:

<sup>26</sup> Մովսես Խորենացի, Հայոց պարմություն, Ե դար, Երևան, 1997, էջ 275:

<sup>27</sup> Նույն դեղում, էջ 71: